



Հայոց Ցեղասպանությունը

Անգլալեզու գրքերի գրականության համառոտ ցանկ՝
չորս փոխկապակցված փուլերի վերաբերյալ

Հայոց ցեղասպանության վերաբերյալ
բանավոր և գրավոր փաստերի զեկուցում
«Գրանդ» կոմիտեական սրահում
Ներկայացուցիչների Պալատ
Լոնդոն

24 ապրիլի 2007 թվական

Առաջին և երկրորդ հրատարակություններ՝ 2007թ., հավելված՝ 2009թ.,
երրորդ հրատարակություն՝ 2011թ., չորրորդ հրատարակություն՝ 2013թ.,
հինգերորդ՝ Հարյուրամյակի հրատարակություն, 1 հունվարի 2015թ.

Վեցերորդ Հրատարակություն ©

 [English](#)

 [Français](#)

 [Русский](#)

 [Español](#)

 [Հայերեն](#)


 [Português](#)

Հեղինակ՝ Թոնի Ս. Քահվե

Արարատ Ժառանգություն

Լոնդոն

2017 թվական



Ցեղասպանություն. գիշերից այն կողմ: Ըստ Ժան Ժանսենի:
Լուսանկարից հատված ըստ Արարատ Ժառանգության:

ՆԱԽԱԲԱՆ

Գոյություն ունեն անցյալում տեղի ունեցած որոշ իրողություններ, որոնք իրենց արտացոլումն են գտել ժամանակակից աշխարհում և առավել իմաստավորվելով ապագայի համար՝ կրում են մշտական ուշադրության անհրաժեշտություն: Դրանց կարևորությունը ընդգծվում է անկախ նրանից, թե որքանով են իշխանության չարաշահողները լավ կազմակերպված ձևով փորձում քողարկել հանցագործներին արդարադատության դեմ կանգնելուց, ինչպես նաև պայմանավորված է սոցիալական և հոգեբանական մի շարք հեռահար հետևանքներով:

Այս առումով թշնամական վերաբերմունք ցուցաբերող ազգերի կողմից հայոց ցեղասպանության հարցը օրակարգից հանելու և հայերին պատկանող զգալի տարածքները բռնազավթված պահելու ջանքերը դեռևս երկար ժամանակ կմնա որպես միջազգային հրատապություն ունեցող հարց: Անկասկած է, որ այս հարցի արդիականությունը ժամանակի ընթացքում առավելապես կմեծանա, քանի դեռ հարցին չի տրվել պատշաճ և արդարացի լուծում: Հարկ է նշել, որ ընդգրկուն վերակառուցողական ծրագիրը հանդիսանում է ապագայում այս հարցի լուծման ամենախելամիտ տարբերակը:

ԱՌԱՋԱԲԱՆ

1. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈԻԼ

Այս փուլը ներառում է հայերի կոտորածների ժամանակահատվածը՝ հիմնականում 1894-96 թվականները և Ադանայի 1909 թվականի կոտորածը: Այստեղ ներառված է այս ժամանակահատվածին վերաբերող համեմատաբար փոքրաթիվ գրականություն: Ցանկում ընդգրկված որոշ աշխատություններ մատնանշում են ավելի վաղ շրջանում կնքված միջազգային պայմանագրեր, որոնք ի գործու չեղան պաշտպանել հայերի իրավունքները: Ինչպես հայտնի է, կոտորածները տեղի են ունեցել խաղաղ ժամանակաշրջանում՝ միջազգային ռազմական գործողությունների բացակայության պայմաններում, և այստեղից շոշափելի է հանցագործի՝ ավելի վաղ ժամանակաշրջանում արդեն իսկ դրսևորած նշանակալի վնասարարությունը: Այդ ընթացքում զոհերի քանակը հաշվարկվում է հարյուր հազարներով: Այս փուլը կարելի է նաև անվանել իբրև «ՀԱՊՃԵՊ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ»: Այս առումով անվանի քաղաքական վերլուծաբան, պատմաբան և Լոնդոնի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի ուսումնասիրությունների տնօրեն պրոֆեսոր Ա.Ջ. Թոյնքին հստակորեն նշում է իր «Փորձառություններ» աշխատության մեջ, ուր մասնավորապես ասված է.

«Ես բավականին տարեց եմ հիշելու համար տխրահռչակ Սուլթան Աբդուլ Համիդ II-ի սադրանքներով 1896 թվականին Օսմանյան Կայսրությունում հայազգի օսմանյան հպատակների կոտորածների սարսափը: Սակայն այս ցեղասպանության գործողությունը կարող է կրել սիրողական և անարդյունավետ բնույթ, եթե այն համեմատվի ավելի մեծ հաջողություն ունեցած փորձով, որի նպատակն էր վերացնել Օսմանյան Կայսրության հայերին Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում...»:

2. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՓՈԻԼ

Այս փուլը ընդգրկում է Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիները՝ 1915-18թթ.: Սա բնորոշում է երիտթուրքերին և նրանց հեռահար նպատակները: Նրանք իշխանության էին հասել 1913 թվականի հունվարին՝ հեղաշրջում կատարելով և վտարելով Օսմանյան սահմանադրական կառավարությանը, որը ձևավորվել էր Ազատության և Անտանտի կուսակցության կողմից: Երիտթուրքերի ռասիստական և ազգայնամոլական գաղափարախոսությունը Թուրքիզմի (Türkcülük) նկատմամբ միայն քարոզչական միջոցներով իրեն չարդարացրեց և տարածում չգտավ լայն զանգվածների մոտ: Հետևաբար, նրանք ընտրեցին

իշխանության հասնելու ավելի արագ, բայց բռնի տարբերակ, որը նրանց հնարավորություն կտար առավել արդյունավետորեն կերպով իրագործել Թուրքիզմի քաղաքականությունը: Այսպիսով, նրանք աջակցեցին օսմանյան ազգային ինքնության ավելի արագ վերացմանը: Եվ այդպիսով օսմանյան ազգայնամուլները՝ ի դեմս երիտթուրքերի, դարձան առանձին խումբ՝ ընկղմված Թուրքիզմի գաղափարախոսության մեջ: Նրանց քաղաքական կուսակցությունը, որը սերտ կապեր ուներ զինվորականության հետ, Միության և Առաջընթացի կոմիտեն էր (CUP): Հեղաշրջումը (*coup d'état*) մահացու սխալ եղավ Կայսրության համար:

Ներկայացված գրականության հրատարակությունների մեծամասնությունը վերաբերում են այս ժամանակամիջոցին: Աշխարհագրական առումով այս փուլը վերաբերում է հետևյալ տարածքներին. Հայկական Բարձրավանդակ (հիմնականում՝ արևմտյան մասը), Փոքր Ասիա, որ նաև կոչվում է Անատոլիա (ներառում է Կիլիկյան Հայաստանը), Հյուսիսային Քուրդիստան (ներառում է ասորական տարածքները), Հյուսիս-Արևմտյան Իրան, Արևելյան Թրակիան՝ Եվրոպայում, ինչպես նաև Սիրիական և Մեսոպոտամիական անապատները: Ինչպես նկատելի էր նախորդ փուլից, պանիսլամական տարրերը զգալիորեն խրախուսվում էին երիտթուրքերի կողմից: Զոհվածների թիվը գերազանցում էր մեկ միլիոնը: 1915 թվականի ապրիլ ամիսը դասակարգվում է որպես Հայոց Մեծ Ցեղասպանության զագաթնակետ, քանի որ հենց այդ ժամանակամիջոցում հայազգի մտավորականները մայրաքաղաք Կոստանդնուպոլսից / Ստամբուլից արտաքսվեցին դեպի մահվան ճիրաններ: Պրոֆեսոր Ա.Ջ.Թոյնբին, որը ապրել է Առաջին և Երկրորդ Համաշխարհային պատերազմների ընթացքում, տեղի ունեցած երկու ցեղասպանությունների ժամանակահատվածում, իր «*Փորձառություններ*» աշխատության մեջ կատարում է շատ տեղին համեմատություններ Միության և Առաջընթացի Կոմիտեի երիտթուրքերի կուսակցության և Գերմանիայի նացիստական վարչակազմի միջև.

«Ցեղասպանությունը, որը 1915 թվականին իրագործվել է Օսմանյան Կայսրությունում՝ հայերի նկատմամբ և Գերմանիայում գտնվող հրեաների՝ դեմ Գերմանիայի կողմից բռնազավթված ոչ-գերմանական Եվրոպայի տարածքներում, Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ, երկու դեպքում էլ իրագործվել է օրինականության թիկնոցի ներքո՝ իշխանությունների սառնարյուն գործողությունների միջոցով: Սրանք անհատ անձանց կողմից ինքնաբուխ կերպով իրականացված մասսայական սպանություններ չէին: Թուրքիայի Միության և Առաջընթացի Կոմիտեի և Հիտլերյան Գերմանիայի անհատ քաղաքացիների պատասխանատվությունը, իհարկե, գերեզմանն էր...»:

3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈԻԼ

Ընդգրկում է 1919-22 թվականները: Ընդ որում, նշենք, որ Ցեղասպանության Ուսումնասիրության Միջազգային Միությունը այս ժամանակաշրջանը համարում է ավելի երկար՝ մինչև 1923 թվականի կոտորածների դեպքերը: Նախորդ բաժինների հետ համեմատ, այստեղ ներկայացված են այս ժամանակահատվածին վերաբերող ավելի քիչ թվով աշխատություններ: Նշված վերնագրերից միայն մի քանիսն են առնչվում օսմանյան ազգային ինքնության հետզհետե անհետացմանը և ռասիստական-ազգայնամոլական գաղափարախոսության՝ Թուրքիզմի, ու դրա նպատակի՝ Թուրանիզմ-Պանթուրքիզմի առաջացմանը, որ շատ բնորոշ էր սկսած 1908 թվականից: Սուննի մահմեդականների ամենաբնի գործողությունները վերելք էին ապրում: Չնայած ընդլայնողական գաղափարախոսությունը ակնառու կերպով ներկա էր նախորդ փուլում, Թուրքիզմը, այնուամենայնիվ, հստակորեն կիրառվում էր Անատոլիայում այս փուլի հենց սկզբից, ռազմականացված երիտթուրքերի խմբավորումների կողմից, որոնք նոր հանրապետությունը հիմնել էին նշված ռասիստական-ազգայնամոլական գաղափարախոսության հիման վրա: Ռասայական խտրականության վրա հիմնված այլատյացությունը դեռևս մնում է անփոփոխ:

Արդյունքում, ցեղասպան գործողությունները զգալիորեն աշխուժացան: Ցեղասպանության բովով անցած հայերի վրա հարձակվում և վերացնում: Ներխուժում է կատարվում արդեն *դե յուրե* ճանաչված անկախ Հայաստանի Հանրապետություն՝ Արևելյան Հայաստան: Գրավվում են մեծ տարածքներ և շարունակվում կոտորածները: Սնծովյան Պոնտոսի հունական տարածաշրջանում մշտապես տեղի են ունենում արտաքսման ծրագրեր և ցեղասպանություն արտացոլող կոտորածներ: Ցեղասպանություն վերապրած ասորի քրիստոնյաներին չի թույլատրվում վերադառնալ իրենց տարածքներ: Եզդիները նույնպես տուժում են մեծապես: 1922 թվականի սեպտեմբերին Զմյուռնիայի/Իզմիրի Էգեյան նավահանգիստը մեծ մասամբ վերացվում է խոշոր ցեղասպանության միջոցով՝ Ադանայում 1909թ. կիրառված նույն մարտավարությամբ՝ այնտեղի քրիստոնյա բնակչության լայն զանգվածերին կոտորելով: Մա Անատոլիայում Եվրոպայի վախճանն է: Հետպատերազմյան *դե յուրե* Օսմանյան սահմանադրական կառավարությունը, որը պատերազմից հետո վերահաստատվել էր Ստամբուլ/Կոստանդնուպոլսում, լիովին դեմ էր Անատոլիայիում գործող երիտթուրքերին: Նրանց կողմից նույնիսկ հրաման էր արձակվել ձերբակալելու ու սպանելու վերջիններիս ղեկավարներին, բայց նպատակին չէր հասել: Այդ ժամանակահատվածում գոհվածների թիվը հաշվարկվում է հարյուր հազարներով:

Այսպիսով, ցեղասպանության նախնական և ավարտական վերոհիշյալ փուլերը սերտորեն կապակցված են: Նախնական դիտավորության ժամանակ չարագործությունը առաջնորդում էր Էնվերը, ով հանդիսանում էր անատոլիական թուրքիզմի հավակնոտ գեներալիսիմոն: Հետագա

ավարտական փուլում այդ գործի ղեկավարումը ստանձնում է Մուստաֆա Քեմալը: Երկունս էլ խաբեությամբ խուսափում են ձերբակալվելուց և պատժվելուց: Այս փոխկապակցված գործողությունները լավագույնս արձանագրված են ժամանակակիցներ Արթուր Ջ. Գրանտի [Լիդսի Համալսարան] և Հարոլդ Թեմփերլիի [Քեմբրիջի Համալսարան] կողմից իրենց համատեղ աշխատանքի հինգերորդ հրատարակության մեջ, որը վերաբերում է նախքան Երկրորդ Համաշխարհային Պատերազմն ընկած ժամանակաշրջանին և վերնագրված է «Եվրոպան տասնիններորդ և քսաներորդ դարերում». մեջբերվում է. *«Հնվեր-քեմալական փորձը, վերացնելու մի ամբողջ ազգ, հանցագործություն է, որի զուգահեռը չկա պատմության մեջ»*: Դրան հաջորդող պարբերությունում այդ պրոֆեսորները շեշտում են այն փաստը, որ Հայաստանը զարմանալիորեն քիչ օգնություն ստացավ Արևմտյան Եվրոպայից, որը համարվում էր լուրջ ձախողում, չնայած որ ազգը դատապարտված էր գոյատևելու: Այս առումով նրանք հավաստել են. *«Մարդու ամենասատանայական չարագործությունը հաղթանակվեց հայ ազգի գերմարդկային տոկունությամբ»*:

4. ԺԽՏՈՂԱԿԱՆ ՓՈԻԼ. ԿՐԿԻՆ ԽՍԵՎՈՐՎԵԼՈՒ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

Այս փուլը նշանակալի կարևորություն ստացավ ժամանակակից աշխարհի, ինչպես նաև ապագայի համար հետևություններ անելու առումով: Այն սկսվում է 1921 թվականին՝ Անատոլիայի երիտթուրքերի ղեկավարության և Մոսկվայի Խորհրդային Միության ղեկավարության միջև Մոսկվայում կնքված երկկողմ Բարեկամության պայմանագրով: Նրանցից ոչ մեկը *դե յուրե* ճանաչված պետություն չէր ներկայացնում: Այս պայմանագիրը մի շարք տեսանկյուններից կարելի է համարել դավաճանություն և վատ կամքի դրսևորում՝ ուղղված Հայաստանի դեմ: Այս պայմանագիրը, ինչպես նշված էր իր տեքստում (տեքստ, որը հղի էր բարոյական ստորությամբ) վավերացվեց հայկական բռնագրավված քաղաքներից մեկում՝ Կարսում, որտեղ հիմնական նպատակներին ավելացվեցին հավելյալ դրույթներ: Այդ իսկ պատճառով, ոմանք այն անվանում են Կարսի Պայմանագիր: Հետաքրքրական է, որ նույնիսկ Ռուսաստանի ստեղծած փոքրածավալ Խորհրդային Հայաստանը, սպառնալիքի ներքո, ստիպված է լինում ստորագրել այդ պայմանագիրը: Ռուսաստանի ցուցաբերած նվազագույն օգնությունը խաբուսիկ է, քանի որ այն միակ Եվրոպական երկրներից է, որն իր բարենպաստ աշխարհագրական դիրքի ու ռազմական պատրաստվածության շնորհիվ կարող էր Հայաստանին ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունը: Ռուսաստանը սկսում է ագրեսոր ցեղասպան թուրք զինվորականներին տալ ամբողջ Արևմտյան Հայաստանը, մինչև նույն ժամանակ նմանատիպ չարակամությամբ էլ Արևելյան Հայաստանի հողերը սկսում է տալ հարևան երկրներին: Այս դիվերսիան կատարվում է ուժի և սպառնալիքի ներքո: Եվրոպական քաղաքակրթության ներսում կան մի շարք մեծ

դավաճանություններ: Այս օրինակը նույնպես կարող է ավելացվել այս դասակարգին: Հայաստանի տարածքային ամբողջականությունը գործնականում դառնում է զրոյական, և նույնը կարելի է ասել նաև նրա անկախության վերաբերյալ՝ բազմաթիվ առումներով: Այսպիսի հանցագործությամբ սահմաններ կազմելը չի կարող լինել օրինական և հարատև: Եվրոպական արժեքները ջախջախվում են և ավելին՝ եվրոպական մշակութային սահմանները այդ վճռական պահին քայքայվում են:

Իր ստեղծման պահից ի վեր, վերոնշյալ Բարեկամական Պայմանագիրը եղել է անվավեր և չեղյալ, բացառությամբ այն չարագործների և դրանց սատարող սանձարձակ շրջապատի համար, ովքեր նախաձեռնել էին իրենց իսկ չարագործության իրականացման համար: Իրավական տեսակետից այն գնահատվում է որպես երկու *ոչ-դե յուրե* ռեժիմների կողմից *դե յուրե* երկրի քանդում: Բանակցությունների վերաբերյալ մանրամասները առկա են Ալի Ֆաուր Ջեբեսոյի «*Moskova Hatıraları*, Ստամբուլ, 1955թ.» աշխատության մեջ: Երիտթուրք (CUP) սպան Անատոլիական Թուրքիզմի կողմից ուղարկվել էր Մոսկվա, ներկայացվելով իբրև «դեսպան»: Ինչպես ենթադրվում էր, այս կեղծիքը դուրս է մնում 1923 թվականի հուլիսին կնքված բազմակողմ Լոզանի Պայմանագրից: Այդուհանդերձ, Լոզանի Պայմանագիրը մի շարք իրավաբանական սխալներ է պարունակում՝ համեմատած նախորդ՝ 1920 թվականի օգոստոսին կնքված բազմակողմ Սևրի Պայմանագրի հետ, քանի որ Սևրի Պայմանագրի մի շարք դրույթներ, որոնք որոշակի արդարություն էին դրսևորում փոքր ազգերի և նրանց տարածքային ամբողջականության նկատմամբ, բացակայում են Լոզանի Պայմանագրում: Վերջինս փաստորեն կանաչ ճանապարհ էր հարթում պետական չարամիտ և արյունարբու գործունեության համար: Լոզանի Պայմանագիրը Սևրի Պայմանագրի շրջանցման փորձ էր և ստորագրող կողմերը նույնը չէին: Քողարկող ոչ-բռնիության դրսևորումը երկու պայմանագրերում էլ առկա էր: Սակայն ամենանշանակալին այն է, որ Արևմտյան Հայաստանի սահմանները Անատոլիայի կողմից սահմանագծվել էին 1920 թվականի նոյեմբերին՝ նախագահ Վուդրո Ուիլսոնի միջնորդությամբ: Միջազգային իրավունքում միջնորդությունները օրենքի հարկադիր ուժ ունեն: Մինչդեռ Լոզանի Պայմանագիրը ընդգրկված շրջանների համար որևէ սահման չի նշում: Հաշվի առնելով այս ամենը, Ուիլսոնի միջնորդած որոշումը առավելագույնս ճշմարիտ և արդարացի է, որպես միջազգային հանրության համատեղ աշխատանքի արդյունք: Որոշակի առումով պատշաճ կլիներ նաև հղում կատարել Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի «*Խաղաղության պայմանագրերի մասին իրականությունը*» աշխատությանը, որը հրատարակվել է 1938 թվականին:

Սևրի Պայմանագրի և Ուիլսոնի միջնորդագրի համապատասխան բաժինները չէին կարող կիրառվել, քանի որ երիտթուրքերը վերսկսել էին ցեղասպան բռնությունները, ինչպես արդեն նշվել է Ավարտական ժամանակաշրջանի նկարագրության մեջ: Ծայրահեղ բռնությամբ է կասեցվել նաև

Պայմանագրի վավերացման գործընթացը: Ակնհայտ է, որ մի թաքուն նպատակ կար, այն է՝ քողարկել և շրջանցել Հայաստանի և Հայոց Յեղասպանության հետ կապված իրողությունները: Դրանք համակարգված կերպով փոխկապակցված են: Իսկապես, ցեղասպանության գլխավոր նպատակը երկակի է. կոտորել մի ազգ և բռնագավթել նրա երկիրը: Այստեղ միջազգային իրավունքը և բարոյական արժեքները փշրվում են: Ազգերի Լիգայի կողմից միաձայն ընդունված որոշումները կտրականապես դեմ են այդպիսի իրադարձությունների զարգացմանը: Արդյունքում, հաստատվում է նենգ նպատակների վրա հիմնված գործողությունների սաստկացող միտում: Այս միտումը շարունակվում է: Հույժ կարևոր է նման ծայրահեղականության լիարժեք վերացումը:

[Միջազգային պայմանագրեր. Իրավական և քաղաքական նկատառումներ:](#)

Հետևանքների փաստերի և անհրաժեշտ ճշգրտումների ժխտումը նոր չարագործությունների է հանգեցնում: Երկու տասնամյակից էլ պակաս ժամանակահատված հետո Նացիստական ղեկավարությունը հայտարարում է, որ հայերի ցեղասպանության համար ոչ ոք պատասխանատվության չկանչվեց, իսկ հետո, օգտագործելով այն՝ որպես օրինակ, սկսում է ծավալել իր խոշոր ցեղասպան գործունեությունը: Նացիզմն, իհարկե, ևս ռասիստական-ազգայնամոլական գաղափարախոսություն է: Այսպիսով, մի շարք խոշոր ուժերի կողմից անցյալում դրսևորած չարագործ անգործությունը մեղավոր է դառնում հետագա ոճրագործության համար: Ունձգություն կատարող ազգերը կրում են միասնական պատասխանատվություն: Նացիզմի՝ դեպի արևելք ընդլայնվելու սկզբունքը, որը հիմնված էր աշխարհիկ դրսևորումների վրա, դասակարգվում էր որպես “*lebensraum*”. Զուգահեռները առկա են Թուրքիզմի գաղափարախոսության մեջ՝ լինեն դրանք աշխարհիկ կամ իսլամական:

Ավելի ուշ լույս տեսած մի շարք հրատարակություններ անդրադառնում են ժխտման փուլին, մյուսները փաստում են նաև այլ ցեղասպանությունների մասին: Գրականության ցանկում ընդգրկված բոլոր գրքերը ուղղակիորեն վերաբերում են հայերի կոտորածներին: Գոյություն ունեն նաև Յեղասպանությունը վերապրածների տարբեր լեզուներով հրատարակված մի շարք կենսագրական նյութեր, որոնք պետք է կազմեն առանձին ցանկ: Գրականության ցանկը գերծ է ծանրաբեռնվածությունից: Ավելին, այս բաժնում հաճախ գործածված «ժխտող» բառը նորամուծություն է, որ կարող է հաջողությամբ դասակարգել Յեղասպանությունը ժխտողներին և նրանց գործելակերպը: Այս խմբի մեջ կարող են ներառվել նաև նրանք, ովքեր արհամարհում են տեղի ունեցած նմանատիպ մեծ և փաստագրված իրողությունները ազատ աշխարհում: Հանցագործ մտայնություններ ունեցողները սահմանափակումներ չունեն: Ներկայիս իրողությունները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր անկախ ցեղասպանագետները և պատմաբանները, բացի այն սակավաթիվ անձանցից, ովքեր ուղղակի կամ անուղղակիորեն գործել են կամ որևէ կերպ կապված են եղել ունձգություն կատարող տարրերի հետ, հայերի կոտորածները դասակարգում են որպես

ցեղասպանություն: Գիտական հրապարակումների գերիշխող մասն արտացոլում է այս փաստը: Միավորված Ազգերի 1948թ. Ցեղասպանության հանցագործության մասին կոնվենցիայի նախաբանում ասվում է. «Ճանաչելով, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում Ցեղասպանությունը պատճառել է մարդկության մեծ կորուստներ»: Հետևաբար, անցյալում տեղի ունեցած անփոփոխ զարգացումները, որոնք ճշգրտորեն արձանագրված են, նույնպես դասակարգվում են որպես ցեղասպանություն: [ՄԱԿ-ի Համաձայնագրեր, արձանագրությունները և կոնվենցիաներ:](#) Հայերի զանգվածային կոտորածների դրսևորումները սկսել են 1915 թվականից դեռևս քսան տարի առաջ, սակայն դրա առաջնային փուլի կոտորածների գագաթնակետը եղել է 1915-1917 թվականներին տեղի ունեցած *Մեծ Ցեղասպանության* հանգուցալուծումը, որը երբեմն կոչվում է նաև *Մեծ Եղեռն* և *Մեծ Ոճիր*: Անատոլիական Թուրքիզմի տիրապետության տակ գտնվող տարածքներում հայազգի բնակչության գրանցված թիվը ներկայումս կկազմի շուրջ ութ միլիոնից ավել:

Փաստորեն այն, ինչը կորցվել է, չի վերադարձվել և դեռևս գտվում է բռնագավթման մեջ, ներառյալ փոխհատուցման հարցը, որը հստակորեն ցույց է տալիս, որ հանցանքի մարմնավորումը մեծապես տեղավորվում է ցեղասպանության սահմանման տիրույթում, ինչպես նաև ենթադրում է հավելյալ դրսևորումներ: Ներկայիս իրողությունը ոչնչացում է և հանդիսանում է բարոյապես և փաստացի ցեղասպանություն. իրավական տեսանկյունից այն կարող է դասակարգվել նաև որպես մարդկության դեմ հանցանք, ինչպես նաև՝ ցեղասպանություն: Ներկայիս իրողությունների ճնշման ներքո անհրաժեշտ է մշտապես ընդգծել ցեղասպանության իրավական դասակարգումը: Դեռ ավելին, բոլոր առնչվող կողմերի անվտանգության առումով կենսական նշանակություն ունի ոճրագործի ոչ-էթիկականորեն առաջ քաշվող դիրքորոշման արդյունավետ կասեցումը: Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է Օսմանյան Կայսրության իրավահաջորդ պետությունը: Խելամիտ կլինե՞ր փաստել նաև, որ ցեղասպանության՝ բռնությամբ հիմնված սահմանները չեն կարող ամրագրվել իբրև օրինական:

Ամբողջ ազգի կամ որոշակի խմբի ամբողջական կամ որոշակի մասի դեմ իրականացվող բազմաշերտ ոչնչացումները, որոնք իրենց մեջ ներառում են զանգվածային սպանոց և դրանից բխող զարգացումներ՝ ճանաչվում է որպես Ցեղասպանություն: Եթե հաշվի առնենք Մերժողական փուլի հարատև բնույթը, ապա Հայաստանի օրինակը հանդիսանում է ներկա ժամանակների բազմաշերտ ոչնչացման ամենացայտուն դեպքը: Դրա շերտային ձևավորումը մեծ առումով ներառում է նաև ազգի բնօրրան հանդիսացող հողերի զավթումը, որը հարկադրում է մեծամասնությանը՝ հատկապես երեխաներին, ձուլվել և կորսվել օտար հողերում:

ՄԱԿ-ի 1948թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայի առաջին երեք հիմնական հոդվածները վերաբերում են ինչպես պետություններին, այնպես էլ անհատներին: Հոդված I-ը դասակարգում է Ցեղասպանությունը, անկախ այն հանգամանքից՝ այն իրականացվել է խաղաղության թե՛ պատերազմի ժամանակ, որպես միջազգային իրավունքի ենթակա հանցագործություն և ստանձնում է կանխարգելել և պատժել այն: Հոդված II-ում ներկայացվում է ցեղասպանությունը բնորոշող հինգ գործողություններ: Հայերի օրինակը լիովին համապատասխանում է բոլոր առումներով: Հոդված III-ում մասնակիացվում են պատժի տարբերկներ, որոնցից են դավադրությունը և մեղսակցությունը: Հետագա մի շարք հոդվածներ վերաբերում են անհատների արտահանձնմանը, դատավարությանը և պատժին: Հոդված Article IX-ում ամրագրվում է *“... Պետության պատասխանադրվությունը Ցեղասպանության կամ Հոդված 3-ում թվարկված որևէ այլ գործողության համար”*: Հայերի օրինակը պետք է ինքնընթաց կերպով առնչվեր վերոնշյալ դրույթի հետ, եթե դա տեղի ունենար 1948 թվականից հետո: . Օրենքի հետադարձ ուժը, որքանով դա վերաբերում է միջազգային իրավունքին, կարող է շրջանցվել համապատասխան միջազգային դատարանի միջոցով, կամել գերտերությունների միասնական միջազգային դիրքորոշման միջոցով: Առաջընթացը, այնուամենայնիվ, նույնպես պահանջում է դատավճիռների իրագործում, եթե Ցեղասպանության այս հստակ բնութագրումները շտկվեն:

Պետք է հիշվի, որ Վուդրոու Վիլսոնի միջազգայնորեն վավերական հանխացող Հայաստանի վերաբերյալ վճիռը հնարավոր չեղավ իրականացնող մեղսագործի ռազմական ագրեսիայի պատճառով: Նպատակահարմար է նշել նաև, որ եթե այս անհամապատասխանությունը տևի երկար, ապա գերտերությունները կարող են դիտարկել մեղսագործին իր իսկ դեղամիջոցներով համապատասխանաբար պատասխանատվության ենթարկելը:

Համաձայն ՄԱԿ-ի 1968թ. նոյեմբերի 26-ի Կոնվենցիայի, գոյություն ունի անկիրառելի դրույթային սահմանափակում, որը վերաբերում է Պատերազմական հանցագործություններին և Մարդկության դեմ հանցագործություններին, և սա առկա է նաև ցեղասպանության պարագայում: Վերոգրյալ հանցագործություններին վերաբերող տերմինը հորինվել է 1915 թվականին Դաշինքի Ուժերի կողմից՝ ի պատասխան հայերի կոտորածների: Եվ ավելին, երկարատև իրավական նախադեպը, անշուշտ, ամրագրում է, որ հանցագործը, պետության պատասխանատվության կամ այլ դեպքերում, չի կարող պահպանել իր հանցանքների պտուղները:

ՆԿԱՐՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ

1. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈԻԼ



1894-96 թվականների (նախնական փուլ) ընթացքում, որպես թիրախ ընտրված տարածաշրջաններն էին Արևմտյան Հայաստանը, Հյուսիսային Քուրդիստանը, Արևելյան Անատոլիան, և ի վերջո մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, որ ևս ներգրավված էր: Զոհերը սպանվում էին իրենց հայրենի քաղաքներում և գյուղերում և թաղվում էին մասսայական գերեզմաններում, ինչպես պատկերված է կից ներկայացված 1895թ. Էրզուրումի լուսանկարում: 1909 թվականը վերաբերվում է Ադանա քաղաքին և նրա շրջակայքում գտնվող հայկական գյուղերին, որոնք գտնվում են

Անատոլիական Հայաստանում և կոչվում՝ Կիլիկիա: Այն գտնվում էր Միջերկրական ծովի ափամերձ տարածքում: Այնտեղ ջարդերի գործընթացը տեղի է ունեցել զգալիորեն ինտենսիվ՝ զանգվածային ցեղասպանության միջոցով: Այս փուլի ընթացքում, ինչպես նաև ցեղասպանության առաջնային փուլին հաջորդող ժամանակահատվածում, Սուննի քրդերը մեծ դերակատարում են ունեցել կոտորածների գործընթացում: Նրանց հիմնական նպատակն էր Արևմտյան Հայաստանի ընդարձակ տարածքներն ավելացնել նոր Քուրդիստանին, որը նպատակ ունեին ստեղծել: Նախագահ Ուիլսոնի միջնորդությամբ գծված օրինական սահմանները պարտավորեցնող են և ճշգրիտ: Այս սահմանագծումը հայտնի է որպես Վիլսոնյան Սահմանագիծ: Դրա ավելի ընդգրկուն գծանշումը հայտնի է որպես Վիլսոնյան սահմանագիծ: Այս ժամանակահատվածին վերաբերող պատկերների և լուսանկարների մի գերազանց հավաքածու առկա է Հայկ Դեմոյանի «Հայոց Ցեղասպանություն. Համաշխարհային մամուլի շապիկներ» աշխատությունում, AGM-Ինստիտուտ, 2014: Զախողված միջազգային պայմանագրերին ծանոթանալու համար կարող եք ուսումնասիրել հետևյալ աշխատությունները՝ Մ.Գ. Ռոլին – Ժաքեմինս, «Հայաստան, հայերը և պայմանագրերը», Լոնդոն, 1891, և Արգիլի Դյուք, «Մեր պատասխանատվությունները Թուրքիայի համար», Լոնդոն, 1896: Կան բազմաթիվ այլ աշխատություններ ևս, որոնք պարունակում են առնչվող մանրամասներ:

«Համիդիե»-ները՝ սուննի քրդական ոչ-կանոնավոր զորախմբերը, որոնք անվանակոչվել էին միապետի պատվին, ստեղծվել էին մի շարք արևելյան շրջաններում Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից: Նրանց զորահավաքն իրագործվում էր իսլամական աղոթքներով, ինչպես դա պատկերված է 1895թ. Դիարբեքի օրինակում: Զորախմբերը կոտորածների գործընթացում կարևոր դերակատարում ունեցան, որն իր հերթին կապ ուներ սուննիական պան-իսլամական քաղաքականության հետ: Այդ քաղաքականությունն ուղղված էր մի շարք Եվրոպական ուժերի, և անշուշտ՝ նաև սուննիական Իրանի դեմ: Ցեղասպանության սկիզբը 1894թ. օգոստոսն էր: Հազարավորների հասնող կանոնավոր զորքի և «համիդիե»-ի կողմից ոչնչացվեց Արևմտյան Հայաստանի Սասունի շրջանի և Մուշ քաղաքի հարավի լեռնային գյուղերը: Նպատակը բոլորին սպանելն էր: Մանրամասների համար առաջարկվում է դիտարկել Սըր Ռոբերտ Գրեյվսի «Մերձավոր Արևելքի Փոթորկալի Կենտրոնները», 1933, և Քրիստոֆեր Ջ. Ուոկերի «Հայաստան. Մի Ազգի Վերապրումը», 1980:




Ադանայի կոտորածները, 1909 թվականի ցեղասպանությունը, որտեղ զոհերի քանակը հասնում է երեսուն հազարի, իրագործվել է ոչ-պատերազմական ժամանակահատվածում՝ երկու արագորեն միմյանց հաջորդող փուլերով: Առաջին փուլն իրագործվել է Աբդուլ Համիդի Սուննի պանիսլամական քաղաքականության համաձայն: Քաղաքականություն, որը կիրառվում էր վերոնշյալ 1890-ական թվականների կոտորածների ընթացքում: Այդ միապետին, որին հաճախ անվանում էին Կարմիր Սուլթան կամ Մեծ Մարդասպան, արագորեն փոխարինում է երիտթուրքերի սպայակազմը, որը հիմնականում հետամուտ է լինում Թուրքիզմի գաղափարախոսությանը: Երկրորդ փուլն անմիջապես իրագործվում է միևնույն՝ գաղափարախոսական տարրերով, որը մինչ այդ իրականացնում էր Աբդուլ Համիդը՝ Պանիսլամիզմի ներքո, և այն փոխարինվում է այն բարգավաճող Թուրքիզմի գաղափարախոսությամբ: Այդ տարրը հանդիսանում էր Միության և Առաջընթացի Կոմիտեն:

Պանիսլամական օսմանիզմի քաղաքականության շրջանակներում քրիստոնեական ազգությունները չէին կարող գոյատևել, եթե նրանք ձգտեին անկախության, ինքնավարության կամ ավելի հստակ՝ Եվրոպական արժեքների: Հետևաբար, նրանք աստիճանաբար պետք է ոչնչացվեին: Միևնույն ցեղասպան գործընթացը զարգանում է նաև Թուրքիզմի ներքո: Համաձայն ռասիստական-ազգայնամոլական սկզբունքների, տեղի քրիստոնեական ազգությունները համարվում էին ռասսայապես անհամատեղելի: Հետևաբար կոտորածները, որպես իրագործվող քաղաքականություն, մեկ անգամ ևս իրականացվեցին: Հայերը՝ Օսմանների մատուցած նշանակալի աջակցության շնորհիվ կոչվում էին *Milleti Sadıka* / Հավատարիմ Ազգ: Այս տեսակետը ամբողջովին վերացավ:



Հուր և սուր, 1909թ. Ադանայի կոտորածները, Կիլիկիա, Անատոլիա

Այս առումով, ոչ միայն հայ ազգը, այլև ամբողջ Հայկական Բարձրավանդակը հատուկ թիրախ էր: Այն պետք է ոչնչացվեր մոլորակի երեսից, քանի որ աշխարհագրորեն գտնվում էր Թուրքիզմի բնորոշ ռասիստական և ընդլայնողական Թուրանիզմի դրսևորման Պանթուրքիզմի ճանապարհին: Ակնհայտորեն, Ցեղասպանության իրականացումը հետևողական կերպով կանխամտածված էր: Նրանք, ովքեր հանդիմանում էին պանիսլամական օսմանիզմը և թուրքիզմը՝ Օսմանյան Սահմանադրականներն էին, որոնք նպատակ ունեին պահպանել օսմանյան ազգային ինքնությունը Սահմանադրական միապետության միջոցով և ինքնավարություն տալով Օսմանյան պետության տարբեր ազգություններին՝ այդպիսով ձգտելով ստեղծել դաշնություն: Լուսանկարների միջոցով Ադանայի զարգացումները դրսևորում են գերազանց ֆոտոփաստեր, թե ինչ է տեղի ունեցել իրականում: Միմյանց հաջորդող երկու փուլերի ընթացքում, այնուամենայնիվ, երիտթուրքերը, որոնք պիտակավորվել են նաև որպես «Ազգայնականներ», խստորեն արգելեցին ցեղասպան գործընթացների լուսանկարահանումը: Ադանայի կոտորածներին վերաբերող լուսանկարը գտնվում է նաև Հ. Ս. Վուդսի աշխատությունում. *Եվրոպայի վտանգավոր տիրույթները*, Լոնդոն, 1911թ.: Լուսանկարներին առավել մանրամասն ծանոթանալու համար կարելի է հղում կատարել «Գրաֆիկ»-ին՝ Լոնդոնում հրատարակվող պատկերազարդ շաբաթաթերթին:



2. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՓՈԻԼ

Արևմտյան Անատոլիայում, ուր ապրուստի հնարավորություններ չկային, հայազգի բնակչությունը հաճախ տեղահանվում էր Բեռլին-Բադադ երկաթգծի երկաթուղային բեռնատար վագոններով, ինչպես ցույց է տրված լուսանկարում: Ադանայի մոտակայքում՝ հարավում, երկաթգծի կառուցման աշխատանքները դեռ ավարտին հասցված չէին: Հետևաբար, նախքան վերջնակետին հասնելը ի հայտ եկան չնախատեսված համակենտրոնացման

ճամբարներ: Վերապրածները վերջին հաշվով տեղափոխվեցին Սիրիական անապատի հատուկ վայրեր, որոնք ծառայեցին որպես ոչնչացման ճամբարներ: Շատ դեպքերում նացիստները կրկնօրինակեցին միևնույն գործընթացները: Իսկապես, շատ կառավարություններ քաջատեղյակ էին Բրիտանական կառավարության կողմից լայնորեն շրջանառության մեջ դրված փաստաթղթային հրատարակության մասին. «*Ինչպես են վերաբերվում հայերին Օսմանյան Կայսրությունում, 1916*», քանի որ այդ մեծ հատորը փաստացիորեն հանդիսանում է ընդգրկուն ցեղասպանության ուրվագիծը: Առկա են Բրիտանական Պառլամենտի կողմից հրատարակված մի շարք նախնական փաստաթղթեր, որոնք հայտնի են որպես Պառլամենտական Կապույտ Գիրք HSMO-ի կողմից: Այս ժամանակահատվածի վերաբերյալ նյութեր կան նաև լորդ Ջեյմս Բրայսի «Հանսարդ» պառլամենտական գրառումներում, ինչպես նաև այլ պառլամենտականների մոտ:



Արևմտյան Հայաստանից, Արևելյան Անատոլիայից և Հյուսիսային Քուրդիստանից դեպի հարավային անապատներ կատարվող արտաքսումները հիմնականում իրականացվում էին քարավաններով: Նրանք Սուննի քրդերի կողմից ենթարկվում էին հարձակումների, որոնք կոդոպտում և ավերում էին: Այս գործընթացը կազմակերպվում էր ժանդարմերիայի և *Teşkilatı Mahsusa-ի*՝ երիտթուրքերի վարչակազմի գաղտնի ծառայության հետ

համագործակցությամբ: Փաստացիորեն չկար որևէ մեկը՝ զոհերին պաշտպանելու համար: Զինվորական տարիքի հայազգի տղամարդիկ հավաքագրված էին և մեծամասամբ սպանված: Գործընթացը Երկաթե Օղակն է, որից փախչելն է անհնար է:



Մահվան Երթեր: Շատ ընտանիքներ չունեին փոխադրամիջոցներ, հետևաբար նրանք անբարենպաստ պայմաններում հարկադրված էին քայլելով անցնել հսկայական տարածքներ: Համաձայն նախապես ծրագրվածի՝ շատերը չկարողացան գոյատևել: Այս գործընթացների մասին Սըր Ուինսթոն Չերչիլը, այդժամ՝ նախարար, իր 1929 թվականի «Համաշխարհային ճգնաժամից հետո» աշխատության մեջ կատարել է հետևյալ գրառումը. «... տեղահանությունները ընդունվում են որպես սպանդի իրականացման հեշտ համակարգ»: Գործընթացների համադրությունը հանդիսանում է «Բնաջնջելու մտադրության» նպատակային բացահայտ ապացույց, ինչպես դա ամրագրված է ՄԱԿ-ի 1948թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայի երկրորդ հոդվածում: Ի հավելումս պետք է նշել, որ չարագործները իրենց ետևից չեն թողնում հանցագործության վերաբերյալ փաստաթղթեր, որոնց միջոցով նրանց կարելի է ապագայում մեղադրանք ներկայացնել: Ակնկալվում է, որ Օսմանյան և հանրապետական արխիվները մանրակրկտորեն մաքրված են նման նյութերից:

Կյանքը և մահը անապատում. այս զարգացումների վերաբերյալ առկա են բազմաթիվ չարորակ և ստահող դրսևորումներ, որոնք կատարվում են երիտթուրքերի և դրանց իրավահաջորդների կողմից: Թուրքիզմի այս դրսևորումներից մեկն այն է, որ աշխարհին հայտ է ներկայացվում՝ ասելով, թե հայերը չեն, որ տուժել են ցեղասպանությունից, այլ իրական գոհերը թուրքերն են: Եթե դա ճշմարտություն լիներ, ապա թուրքերը կլինեին այն ազգը, որը պետք է անհետանար տեղահանումներ կատարված տարածաշրջաններից կամ ուղղակիորեն տուժեի կոտորածներից, և ոչ թե հայերը: Հետևողական կերպով իրականացված մի շարք կոտորածները, ինչպես նաև դրանց առնչվող արտաքսումները, կասկածից վեր ապացույց են, որ այդ զարգացումները հստակորեն համարվում են ցեղասպանություն, և միաժամանակ պետք է նաև դասակարգել որպես Մարդկության դեմ կատարված հանցագործություն:



Միայն բարեհաջող կերպով պայքար մղող համայնքներն էին կարողանում գոյատևել՝ կոտրելով Ցեղասպանության Թուրքիզմի Երկաթե Օղակը: Այս առումով Արևմտյան Հայաստանում գտնվող Վան քաղաքը լավագույն օրինակն է: Ցավոք, գոյատևելու համար մղվող նմանատիպ պայքարը ձախողվեց Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ: Այդ աղետը, անշուշտ, 1944 թվականի նացիստների դեմ Վարշավայի ապստամբությունն էր: Ֆրանց Վերֆելի «Մուսա Լեռան քառասուն օրը» (*Die vierzing Tage des Musa Dag*) նովելը հանդիսանում է Անատոլիայի առափնյա շրջանում հայերին փրկելու հաջողված պատմվածքի օրինակ՝ Դաշինքի ռազմանավերի աջակցությամբ: Այս գիրքը լայնորեն ընթերցվում էր Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում գերմանացիների դեմ ապստամբների կողմից: Ինչպես ակնկալվում էր, այն արգելված էր նացիստների, ինչպես նաև Անատոլիայում իշխող թուրքիզմի վրա հիմնված ռեժիմի կողմից:



Տեղահանում



Համակենտրոնացում



Ոչնչացում


Ցեղասպանության երկաթե օղակը:
Արագորեն իրականացվող
գործընթացների նպատակն էր
հասնել «Վերջնական Լուծմանը»:

3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈԽԼ



Բազմաթիվ երեխաներ մահացան ցեղասպանության ժամանակահատվածում: Մական պատերազմից որոշ ժամանակ անց Հյուսիսային Ամերիկայի ժողովուրդը մեծ քանակությամբ գումարներ հայթայթեց վերապրածներին աջակցություն ցուցաբերելու համար: Եթե չլիեին այդ մեծ գումարները, բազմաթիվ մարդիկ, հատկապես երեխաներ, կրկին կմահանային: Ամերիկյան Մերձավոր Արևելքի Աջակցությունը, որը նախաձեռնվեց 1915 թվականի Ջեյմս Լ. Բարտոնի, Հենրի Մորգենթաուի և Քլիվլանդ Հ. Դոջի կողմից, շատ հայտնի էր: 1919 թվականին այս իրավիճակը հանդիսացավ Բրիտանիայում «Փրկենք Երեխաներին» հիմնադրամի ստեղծման առաջնային պատճառներից մեկը: Նկարում պատկերված է հյուսիս-ամերիկյան պապական, որն օգտագործվել է նշված գումարների դրամահավաքի կազմակերպման համար: Այն հստակորեն արտացոլում է այդ ժամանակ տեղի ունեցող իրադարձությունները: Վերոհիշյալ Հենրի Մորգենթաուն երիտթուրքերի ավերիչ հատկությունները խորաթափանց կերպով արձանագրել է իր 1918թ. Դեսպան Մորգենթաուի Պատմությունը աշխատությունում:

Վերապրած երեխաները խնամվում էին և այնուհետև հեռացվում էին Թուրքիզմի վտանգից: Ի վերջո, ինչպես քամուն տրված քաղցրավենիքի թղթիկ, նրանք իրենց վերագտնում էին աշխարհի տարբեր ծայրերում: Լուսանկարը ներկայացնում է նման հավաքներից մեկը կենտրոնական Իրաքում՝ Բակուբայում, 1919թ.: Այդ ժամանակ հավաքագրվել էին նաև ասորի երեխաները:



Վերջերս Թուրքիայի վարչապետի կողմից 2014թ. ապրիլի 23-ին հրապարակված *հաղորդագրությունը* առաջին հերթին հասցեագրված էր ցեղասպանությունից հենց այս մազապուրծ եղածների ժառանգներին: Այդ տեքստի բովանդակության մեջ հիմնականում ասվում է, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում միլիոնավոր մարդիկ կորցրեցին իրենց կյանքը, և որ Օսմանյան Կայսրության ազգությունները նույնպես տուժեցին, հետևաբար հայերը ևս այդ օրինակներից են: Հայտարարության մեջ ավելացվում է. «...մենք ցանկանում ենք, որ հայերը, որոնք կորցրել են իրենց կյանքը քսաներորդ դարի վաղ շրջանում, խաղաղ հանգչեն և մենք մեր ցավակցություններն ենք հայտնում նրանց թոռներին»: Հայտարարության այս մեջբերումը գուցե խելամիտ համարվեր, սակայն դրա ոչ ճշգրիտ հակվածությունը ցեղասպանությունից մազապուրծ եղածների ժառանգներին թույլ է տալիս այն լիովին անտեսել: Եվ ավելին, *հաղորդագրությունը*, իհարկե, ամբողջովին ձախողում է խնդրահարույց բազմաթիվ իրողությունների հետ առերեսումը:



Մոխրագույն Գայլը, Թուրանիզմ-Պանթուրքիզմի արևելյան ընդլայնողականության գաղափարախոսությունը ներկայացնող խորհրդանիշը, ներառված էր Անատոլիայի նոր ռեժիմի կողմից 1922 թվականին հրատարակված առաջին նամականիշների խմբաքանակում: Խորհրդանիշի ակունքները գտնվում են մոնղոլական դիցաբանության մեջ:

Երկրի ղեկավարները, որոնք պատերազմի ժամանակ հետամուտ էին եղել այս քաղաքականությանը և իրագործել Հայոց Ցեղասպանության առաջնային փուլը, այդ թվում Էնվերը, Թալյաթը և Ջեմալը, փախուստի դիմեցին՝ ընդուպ մինչև պատերազմի վերջանալը: Այնուամենայնիվ, այս հանցագործները իրենց բացակայությամբ Կոստանդնուպոլսում դատապարտվեցին մահվան *դե յուրե* նոր հիմնված Օսմանյան կառավարության կողմից, որին Դաշինքը սկզբում աջակցություն էր ցուցաբերում: Այն երիտթուրքերի երկրորդ հարթակի հանցագործ սպայակազմն էր, որը սկսեց ինքնուրույն գործել Անատոլիայում և հիմնադրեց նոր ռեժիմ՝ Թուրքիզմի հիման վրա: Նրանք հիմնականում CUP-ի նախկին անդամներն էին: Դաշնակիցները գրավել էին Անատոլիայի միայն որոշ առափնյա շրջաններ և ձախողվել էին դրանց ավելի խորքային մասերի ապառազմականացման հարցում: **Փարիզի Խաղաղության Կոնֆերանս:** Տարրը, որը կորցրեց Կայսրությունը, ենթարկելով այն անտեղի ռիսկի, այդ ժամանակ վճռականորեն ձեռք էր բերում բարձր դիրք: Նրա ռազմական ցասումը, որն անվանվում էր «անկախության պատերազմ», հիմնականում Թուրքիզմի իրականացման համար մղվող մի գործընթաց էր՝ ներառյալ կոտորածները. այն իր մեջ ընդգրկում էր որոշ տարածաշրջաններ բռնազավթած պահերը՝ ինչպիսին Արևելյան Հայաստանը և Հյուսիսային Քուրդիստանն են, միապետության վերացումը և Դաշնակից Ուժերի վտարումը որոշ ծովափնյա շրջաններից:

Նոր ռեժիմը արագորեն սկսեց իրագործել Թուրքիզմի գաղափարախոսությունը՝ հիմնականում չկրթված և զարմանալիորեն խառնված մահմեդական բնակչության շրջանակներում: Նախ մահմեդական փոքրամասնությունները չէին կարող գոյատևել, և հետո ռասայի իդեալը՝ «*ırk*»-ը, խրախուսվում էր և ենթադրյալ ռասայական խառնուրդը հարկադրվում էր բնակչության վրա՝ հատկանշելով, որ նրանք ունեն որոշակի ռասայական ակունքներ, ինչպիսիք են թուրքերը. ռասա, որը ծագել էր Կենտրոնական Ասիայից: «*ırk*» բառը դարձավ գրքերում հաճախակի հանդիպող և միայն պարզորոշ քաղաքական պատճառներով այն դուրս մղվեց 1960-ական թվականների կեսերից: Սակայն գաղափարախոսությունը մնաց անսասան: Այսպիսով սկսվեց զարմանալի պատմության ստեղծումը՝ հիմնվելով թյուր ճշմարտությունների և պարզապես ստահողությունների վրա: Այս ստորության իրականացումը ավելի դյուրին դարձավ, երբ Օսմանյան գրությունը փոխարինվեց լատինատառով: Հիմնական աշխատությունները երբեք չվերահրատարակվեցին կամ զգալիորեն աղավաղվեցին: Պետության գրական աշխատությունների զգալի մասը մնաց վերջնականապես թաղված: Զարմանալիորեն աղավաղվեցին դպրոցական դասագրքերը և տպագրվեցին այլ հրատարակություններ: Սա դեռևս շարունակական գործընթաց է: Ռասայական խտրականության վրա արմատացած այլատյացության ձևաչափը խրախուսվում է լայնամասշտաբ կերպով: Կարևոր են այս աշխատության առավել վաղ շրջանի առաջին հրատարակությունները, քանի որ հետագա հրատարակություններում ռասայական խտրականության դրսևորումները հանված են: Նրանք, ովքեր փորձում էին իրականությունը ներկայացնել Անատոլիական աշխարհում, ձերբակալվեցին: Հարկ է նաև հաշվի առնել, որ Թուրքիզմի գաղափարախոսության մեջ բացահայտ ստախոսը կարող է գործնականորեն առաքինի դառնալ: Իրականում Անատոլիական թուրքը գոյություն ունի միայն Օսմանյան հիմնադրույթներում, ոչ թե Թուրքիզմի կեղծիքների շրջանակներում: Ռեժիմը նոր հիմքերի վրա դնելը հրամայական էր: Թուրքիզմը հիմնովին հանդիսանում է արևելյան ուղղվածության գաղափարախոսություն: Հետևաբար, Սուննի պետության մեջ իսլամական հիմունքների վերահաստատումը ստացավ գործնական հստակություն: Եվ ավելին, եթե այն ուսուցանվում է Թուրքիզմի հետ միասին, Շիա մահմեդականները, որոնք բնակվում են դրա արևելյան *փաստացի* սահմաններից այն կողմ, նույնպես ընդունում են նմանատիպ ծայրահեղական ռասիստական-ազգայնամոլական բնութագիր:



Աջ կողմում պատկերված է Թալեաթի նկարը, որը սկզբում ներքին գործերի նախարարն էր, իսկ հետագայում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, Օսմանյան Կայսրության Մեծն Վեզիրը, որը հավասարագոր է վարչապետին: Նա Միության և առաջընթացի կոմիտեի ականավոր անդամ և Հայոց ցեղասպանության հիմնական կազմակերպիչներից էր: Ձախ կողմում պատկերված են ավելի վաղ ժամանակաշրջանում արված Էնվերի և Մուստաֆա Բեմալի նկարները: Որպես ավագ սպաներ, նրանք ծառայել են 1911-12թթ. Տիպոլիտանիայի պատերազմում: Էնվերը հետագայում դառնալու էր Կայսրության ապագա Պատերազմի հարցերով նախարարը, ինչպես նաև ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկը: Նա ևս հանդիսանում է Միության և առաջընթացի կոմիտեի ականավոր անդամը: Նրանք երկուսն էլ անդամակցում էին նույնպիսի մարդասպան *Teşkilatı Mahsusa*-ին, որը հանդիսանում էր Երիտթուրքերի գաղտնի ծառայությունը: Այն ղեկավարվում էր Էնվերի կողմից:




Սայիդի Քուրդի Նուսին, հայտնի եռանդուն սուննի քուրդ քարոզիչը, նույնպես հպարտ էր գործելով վերոհիշյալ գաղտնի կազմակերպության հովանու ներքո: Հանդես չգալով որպես ուղղակի անդամ, սակայն անձամբ ճանաչելով Էնվերին, նա կազմակերպում էր գործողություններ հազարավոր ոչ-կանոնավորների աջակցությամբ, նախկին «Hamidiye»-ի ոճով, որոնք այդժամ վերստին ակտիվացել էին որպես «*asakir-i milliye-i*



«*Teşkilatı Mahsusa*»-ի տարբերանշանը: Թուրանական-պանթուրքիզմի դրոշի սևապարծ վերածակերպումը, *Üç Hilal – Երեք Մահիկները*

